Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի՝ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 31.05.2023 թվականի ՀԱՊՀ-2023/1 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել:

2. Անվավեր ճանաչել (վերացնել) «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 31.05.2023 թվականի ՀԱՊՀ-2023/1 որոշումը:

3. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամից հօգուտ «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊ ընկերության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար և 100 000 ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Թ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**